

Բ. Աւելի կարեւոր է պահեցողութեանդ ձեւը: Զենոր, ինչպէս տեսանք, «անտուղ» կ'երեւակայէ նորադարձ Հայոց պահքը: Կրնանք ուրեմն անկասկած հետեւցնել՝ թէ է դարուն այդ ոճով իսկ կը պահուէր Առաջաւորքը: Զայս արդէն յայտնապէս կը հաստատէ Սիւնեցին ալ դար մը վերջ, ըսելով՝ թէ Հայքս Ս. Գրիգորի սահմանածն ենք պահեր «ծումաչան եւ անտուղ՝ մինչեւ յանասունս անգամ» (Թղթ. 333): Յունաց անտեղի հակառակութիւնն այս պահոց դէմ, — զոր սուտն Գամասկացի կը համարէր հաստատուած Մանազկերտի ժողովէն՝ ընդդէմ քաղկեդոնականաց (Լոյս, 1905, էջ 1114), եւ ուրիշներ՝ իբր ի պատիւ Սարգիս անուն ցնորական կախարդի մը, որոյ հետ կը շփոթէին նոյն պահոց ծայրը տօնուած մեր Ս. Սարգիսը (Ուռ. 213. Բնդհ. 66, 88), — մեծապէս սաստկացուցեր էր յաչս Հայոց՝ այս պահոց նշանակութիւնը: «Այնպէս պնդապահս սահմանեցին, կ'ըսէ սուտն Գամասկացի, որպէս զի անձինք անմեղաց այնպէս երկնչին ի նմանէ՝ որպէս ի բարկութենէն Աստուծոյ» (Լոյս, անդ): Տարօնացին այդ ոգւով կը պաշտպանէ զայն Յունաց դէմ, զրեւով՝ թէ «Մեզ պարտ է հինգօրեայ պահօք ծումաչան լինել» (Թէոփ.